

ՔԱՂՎԱԾՔ

2006թ. ապրիլի 20-ին կայացած էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ տարեկան ընդհանուր ժողովի նիստի արձանագրությունից

Ներկա էին՝

1. Էնթոնի Թերները՝ էյչ-էս-Բի-Սի Յուրդի Բի Վի Ընկերության անունից
2. Արա Ալեքսանյանը՝ Ուինգս Իսթեբլիշմենթի անունից:

Ներկա էին ձայնի իրավունք տվող 100% բաժնետոմսերի սեփականատերերի ներկայացուցիչները:

Ժողովը որոշեց՝

Հաստատել 2005թ. տարեկան շահաբաժինների չափը և վճարման կարգը

Հաստատվեց, որ 2005թ-ի համար վճարվելու է առավելագույնը 1.350.000.000 ՀՀ դրամ տարեկան շահաբաժին, որից 450,000,000 ՀՀ դրամը՝ մայիսին, իսկ 900,000,000 ՀՀ դրամը՝ նոյեմբերին: Այդ վճարումները (կամ դրանցից որևէ մեկը) իրականացնելու պարտավորությունը բանկի մոտ առաջանում է միայն այն դեպքում, եթե տվյալ վճարման (կամ վճարումների) իրականացումը չի հանգեցնի բանկի ընդհանուր կապիտալի նվազմանը ԱՄՆ 15.000.000 դոլարից (հաշվարկված ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխան) կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ պարտադիր տնտեսական նորմատիվների հնարավոր խախտմանը կամ այլ նմանատիպ խնդիրների:

Մ. Հարությունյան, Ընկերության Քարտուղար

30 հունիսի 2006թ  
ամսաթիվ

